

# ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ\*

Գևորգ Բարսեղյան  
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նպատակամիտված է ներկայացնելու սպորտային խոսույթին կատուկ հասկացությունները և լեզվաօճական ու լեզվաարտահայտչական նիշոցները առավել ընդհանրական և նոր լուսի ներքո՝ վերջիններս դիտարկելով որպես ազգային և լեզվամշակութային ինքնության և հասարակական-հոգեբանական ու սոցիալական պահանջմունքի արտահայտություն։ Թեև բազմաթիվ աշխատություններ են նվիրված մշակութային մարդարանության, ազգային մենթալիտետի և պատմա-լեզվամշակութային ինքնության խնդիրներին, դեռևս զգալի է սպորտային խոսույթի և նշյալ հիմնախնդիրների միջև եղած կապերի պարզաբանման անհրաժեշտությունը։ Համակողմանի քննարկման կարիք ունեն, մասնավորապես, անգերեն ու հայերեն սպորտային խոսույթներին բնորոշ տերմինները, հասկացությունները, սպորտային տարբեր խաղերից ու մարզաձևերից ածանցված դարձվածային արտահայտությունները, մակրինները, մակրորավոր կապակցությունները և, հատկապես, դարձույթները։ Հոդվածում ընդգծվում է այն երկկողմանի կապը, որ գոյություն ունի բուն սպորտային խաղերի ու մարզաձևերի և դրանց լեզվական ու լեզվաօճական արտացոլումների միջև։ Վերջիններս ոչ միայն արտացոլում են խաղը, այլև ազդում տվյալ խաղի հոգեբանական ու գաղափարական բնութագրի ծևակորման վրա։

**Բանալի բառեր.** Ինքնություն, ազգա-լեզվամշակութային ավանդույթ, սպորտային խոսույթ, ազգային և սոցիալական մենթալիտետ, սպորտին առնչակից ոլորտներ։

## Ներածություն

Բազմաթիվ աշխատություններ են նվիրված սպորտային խոսույթի և ազգակրոնային և պատմա-լեզվամշակութային կապերի ու առնչությունների միջև առկա խնդիրներին, հատկապես մշակութային մարդարանությանը (Արյունօս, Ռյայկակովա 2009), լեզու-մշակույթ փոխանանությանը (Маслова 2001), լեզուների միջմշակութային կապերին (Terp-Минасова 2000), միֆերին ու անտիկ գրականության հարցերին (Փրայդենբերգ 1978)։ Նշյալ փոխադարձ կապերի արդյունքում սպորտային խոսույթում առաջացել և շրջանառու են դարձել տարբեր ոլորտներից ներթափանցած հակացություններ, սպորտային ինչ-ինչ երևույթներ արտացոլող լեզվաօճական ու լեզվաարտահայտչական միջոցներ (մակրիններ, փոխաբերություններ, դարձույթներ, պատկերավորման այլ միջոցներ), և տարբեր խաղերին ու մարզաձևերին հատուկ, դրանցից ածանցված դարձվածային արտահայտություններ, որոնք տարածվել են ոչ միայն անգերենում, այլև անգերենի շնորհիվ՝ աշխարհի տարբեր լեզուներում։ Քննարկման են ենթարկվել ազգաբանական, ազգագործական և սոցիալական խնդիրներ, ինքնանույնականաց-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 09.07.2016:

ման և ազգային սիմվոլիկայի հետ կապված հարցեր (Садохин, Грушевицкая 2000; Карасик 2002; Brookes 1978; Bourdieu 1991; Smith 1999 և ուրիշներ): Բայց լայնապես մեծաթիվ չեն այն աշխատությունները, որոնցում այս կամ այն դիտանկյունից քննարկվում են սպորտային հասկացությունների և ազգային ինքնության ու մենքալիտետի միջև եղած կապի խնդիրները, դիցուք այն, որ անգլիական իրականության հետ կապված շատ խնդիրներ, հատկապես վիկտորիանական ժամանակաշրջանում, խորհրդանշել են որոշակի հասարակական մտայնություն, սպորտային խաղերի միջոցով արտահայտել են որոշակի ինքնություն՝ հավաստելով մասնակիցների (խաղացողների և դիտողների) ազգային պատկանելիությունը կամ նույնականացումը, որոշակի արժեքների առանցքայնացումն ու համահավաքումը դրանց շուրջ: Այլ կերպ՝ անգլիական (բրիտանական) համարվող շատ խաղեր ու մարզաձևեր ընկալվել և ընկալվում են իբրև որոշակի մտակեցվածքի և մշակութային ինքնագիտակցության արտահայտություն՝ նշութավորված բրիտանական գաղափարախոսությամբ, որին այսօր նպաստում են անգլերեն լեզվի, և անգլերեն սպորտային խոսույթի լայն տարածումն ու միջազգայնացումը: Ասվածի հաստատումն են այդօրինակ խաղերի ու մարզաձևերի նկատմամբ հուզազգացական վերաբերունք արտահայտող շատ լեզվանձական միավորներ՝ մակրիներ, փոխաբերություններ, դարձվածքներ, ճարտասանական դարձույթներ (ճարտասանական հարց, ճարտասանական բացականչություն, ճարտասանական դիմում), կրկնություններ, աստիճանավորում, շրջադարձական խոսքի ընդհատում կամ գեղչում, հակադրություն (հատկապես՝ հականիշների օգտագործմամբ) և այլն: Այդ ամենը անգլերեն, ռուսերեն և ինչ-որ չափով նաև հայերեն լեզվով ուսումնասիրվել ու բնութագրվել են, բայց, այս ամենով հանդերձ, մեր դիտարկմամբ, ողջ լայնքով ու երկայնքով չի քննարկվել մի կարևորագույն հարց, որը վերաբերում է սպորտային խաղերի ու մարզաձևերի որպես ազգամշակութային ինքնության լեզվանձական դրսերումներին և դրանց խոսքային պատճառաբանվածությանը՝ օգտագործման և ներգործման առունուվ:

### **Կրիկետը որպես բրիտանականության նշույթ**

Վերը շարադրվածն առավել առարկայնորեն ներկայացնելու համար քննարկենք, օրինակ. *Cricket* (կրիկետ) բացօթյա-թիմային խաղը: Այս բարի լեզվաոճական կիրառություններում (մակրիներ, դարձվածքներ, հատկարանական միավորներ և այլն) արտացոլվում են բրիտանական ինքնությանը բնորոշ նիստեր, մասնավորապես՝ պատմա-ազգագրական յուրահատուկ նկարգիր՝ նշույթավորված անգլիականության (բրիտանականության) գաղափարախոսությամբ և պատմական-հավաքական հիշողության առկայությամբ, իսկ խաղի հետ կապված մական ու գնդակը, ինչպես նաև ողջ խաղը ընկալվում է որպես բրիտանական իրակություն (Садохин, Грушевицкая 2000; Тер-Минасовա 2000; Маслова 2001): Մյուս կողմից՝ այն կարող է դասվել մշակութային մարդաբանության հասկացույթների շարքը (Mead 1961; Boas 1982; Benedict 1983): Բոլոր դեպքերում թե' *cricket* խաղը, թե' այդ խաղից ածանցվող լեզվանձական արտահայտությունները առնչվում են ազգային-հասարակական որոշակի ըմբռումների և սոցիալ-հոգեբանական ինչ-ինչ չափանիշներին: Խաղը մտագուգորդվում է նաև պետականության, բարոյականության, իրավունքի, սոցիալական ու գեղագիտական ընկալումների, ջենտլմենականության և այլ չափանիշների հետ: Ի

Վերջու, այն կապ ունի մարդ-անհատի հոգեբանության, աշխարհայացքի, ինքնագիտակցության ու ինքնաճանաչման և լայն առումով՝ ինքնություն միջգիտակարգային հասկացության հետ: Պատահական չէ, որ այդ տիպիկ բրիտանական խաղն ու դրա լեզվածական անդրադարձումները տեղ են գտել տարբեր հեղինակների գրական-գեղարվեստական ստեղծագործություններում (Զ. Դիքնս, Ու. Ուորուսվոր, Շ. Հյուզ, Ջ. Քիթ, Ջ. Բայրոն, Կ. Դոյլ, Ջ. Ջեյմս և ուրիշներ):

Այդուհանդերձ ուշագրավ է, որ թեև տիպիկ անգլիական մարզաձևերը արտահայտել են ինքնություն և որոշակի խոսքային նոտիվացիա, դրանք ունեցել են իրենց հակառակորդները: Ջ. Ջոյն, օրինակ, իր Ուշիսե Վեպում (էջ 274) հիշատակում է գալիխական մարմնամարզական ընկերության հիմնադրի նախատիպը համարվող Մայքլ Քյուսաք (Michael Cusack, 1847-1906), որը եղել է անգլիական մարզաձևերի երդվալ թշնամի: Դա անշուշտ ունեցել է նաև իր գաղափարական ազդակները: Սակայն այստեղ կարևոր այն է, որ անգլիական խաղերն ու մարզաձևերը կամ դրանց լեզվածական արտացոլումները, կրելով անգլիական (բրիտանական) ինքնության դրոշմը, հարուցել են որոշ քաղաքական հոսանքների ու առանձին մտածողների դժգոհությունն ու անբարյացկանությունը: Սա նշանակում է, որ նման խաղերն ու մարզաձևերն իբրև ինքնության յուրատեսակ արտահայտություններ, իրոք, ունեցել են նաև հակառակորդներ: Հիշենք թեկուզ Մեծ Բրիտանիայի՝ Եվրոպուրիուրդ և Եվրոպիություն ինտեգրվելու գործընթացի կողմնակիցների ու հակառակորդների, Եվրոպնոտուգիաստների և Եվրոպկեպտիստների գաղափարական բախումներն ու տեսական հարցադրությունները, որոնց անդրադարձել են քաղաքական մշակութաբանության և բրիտանական ինքնության հայցերով գրաղվուները (Տրյացեա 2011): Ինքնությունը (անգլ. *Self* գերմ. *Das Selbst*, ռուս. *самость*), որը, Կ.Գ. Յունգի բնութագրմամբ, անձնավորության գիտակցությունն ու ենթագիտակցությունը միավորող կենտրոնն է և մարդուն տրված արեւտիպերից մեկը (Философский энциклопедический словарь 1983:815), այն առկա է և գործում է մարդկային կյանքի, կեցության ամենատարբեր ոլորտներում և, մասնավորապես, սպորտային մշակություն լավագույնս ներկայացնում է մարդու ինքնությունը:

### **Բրիտանական ինքնության դրսերումը կրիկետային դարձվածքներում**

Անգլիական մշակույթը ներկայացնող շատ արտեֆակտեր և լեզվամշակությին միավորներ գրանցված են տարբեր երկրագիտական բառարաններում, և դրանց շարքում, իիարկե, առանձնանում է *cricket*-ը, որն, ըստ հետազոտողների, որպես լեզվական առանձին միավոր, անգլերենում ի հայտ է եկել XVI դարից: Այն սոուզաբանվում է իբրև ֆրանսերեն *criquet* բառի ֆրանսանդերեն (*crick-crutch*) տարբերակը (Flavell 1999:183)` նշելու համար փայտե գնդակներով տարվող խաղը, որը նման է անգլիական կրիկետին: Հետագայում, կրիկետ խաղի հետ կապված, անգլերենում ծևավորվել են մի շարք լեզվական միավորներ (*fielder*, *bat*, *to bat or be a sticky wicket*, *tit for six*, *not cricket*, *lay cricket* և այլն), կրիկետային դարձվածքներ (*to bat* - լինել դժվարին կացության մեջ, *bat a thousand*, որն ամերիկյան անգլերենում նշանակում է հազար խփել, փայլուն գործ անել, *do sth off one's own bat* - ինչ-որ գործ անել առանց օգնության և այլն), ինչպես նաև փոխարերական շատ արտահայտություններ.

1) *Bat on a sticky wicket* (բառացի՝ հարվածել կաչուն դարպասին),

2) *It is cricket to keep asking the umpire questions* (հրահանգ՝ խաղի կանոն-

ների վերաբերյալ, որի ձեռքբերած փոխաբերական իմաստն է՝ դրսևորել ոչ ազնիվ վարժագիծ)

3) *Do not ask the umpire unless you think the batsman is out* (կրիկետին վերաբերող հրահանգ, որտեղ ուշագրավ է umpire եզրոյթի ընկալումը: Umpire-ը դատավորն է, որը սկզբնապես ընկալվել է որպես խաղացողներին ոչ հավասար, անկաշար, անկողմնակալ, խաղը վերևուն նայող արիտոր):

Ինչպես հայտնի է՝ դարձվածքների առաջացման հիմնական եղանակներից մեկը՝ բարի, արտահայտության փոխաբերականացումն է: Կրիկետի դեպքում, կապված խաղի կանոնների և յուրահատկությունների հետ, փախաբերականց վել և դարձվածքների են վերածվել, օրինակ, հետևյալ արտահայտությունները:

1) *hat trick* (սպորտային խոսություն և այլուր նշանակում է նպատակային, ուղղողված, արդյունավետ գործունեություն: Հիմքում ընկած է գնդակ նետողի (*bowler*) հաջող գործելակերպը, եթե նա խփում է թիրախին, նվաճում դարպասիկ՝ *vicket*):

2) *to bat on a sticky wicket* դարձվածքի բաղադրիչներից *sticky wicket*-ը խորհրդանշում է Անգլիային բնորոշ խոնավ, մառախլապատ կամ անձրևային եղանակը, որի պայմաններում, այնուամենայնիվ գնդակ նետողը հաղթում է՝ ցուցաբերելով հասուլ հմտություն:

3) *off one's bat*-ի փոխաբերական իմաստավորումն է՝ նախաձեռնել՝ հույսը դնելով սեփական ջանքերի վրա:

4) *hit for six*-ը նշանակում է, որ գնդակ նետողը վարկաբեկում է կրիկետը, քանզի կորցնում է վեց միավոր: Գործածվում է նաև ոչ սպորտային խոսություն: Այստեղ պետք է շեշտադրել նաև, որ այսօր արդեն իսկ շրջանառու է ոչ միայն սպորտային խոսությունները, այլ նաև կրիկետային խոսությունը, որի դարձվածյին նմուշները լայն կիրառություն ունեն հրապարակախոսական ու գեղարվեստական բնույթի շատ տեքստերում (տես՝ օրինակ, Flavell 1999:185):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրիկետային խոսություն առկա են ինքնության որոշ նիստեր: Այստեղ մինչանց են հանդիպաղրվում *արդար* և *անարդար* գերհասկացությունները՝ *'it is not cricket'* - կրիկետ չէ՝ արդար չէ, ինչպես նաև *բարի-չար*, *լավ-վատ*, *ազնիվ-անազնիվ* հակառի հասկացությունները՝ որպես առանցք ունենալով *Ճշմարտություն* գերհասկացությունը:

Կրիկետը կապված է այն ամենի հետ, ինչը համապատասխանում է ճշմարտությանը և ազնվաբարող կեցվածքին, որոնք անգլիական բնավորության անգնահատելի բաղադրիչներ են: Ինչպես արդեն նշվել է, այդ ամենի արտահայտություններից է նաև ջենտլմենականությունը, որը նույնպես անգլիացու ինքնության կարևորագույն բաղադրիչ է՝ մի ընկալում, որի հիման վրա ստեղծվել են կրիկետային դարձվածքներ փոխաբերական արտահայտություններ և այլն, կարևորվել է մարզիկի առարինի վարքը, ճշմարտասիրությունը, աշնականությունը, մարտնչելու, հաղթելու, նույնիսկ պարտվելու ունակությունը, դրանով իսկ՝ կրիկետային էսթետիկան՝ մարզասերներին և սոցիալական տարրեր խմբերին պատվաստելու գործընթացի իրականացումը: Ընդհակառակը, մերժվել ու հեգնանքի են արժանացել կրիկետը վարկաբեկող ոչ ջենտլմենները: Վառ օրինակ կարող է ծառայել Ու. Բլեյքի *Island in the Moon* բանաստեղծությունը, որտեղ պոետը հեգնում է կրիկետ խաղալ չիմացողներին՝ կիրառելով *a bat, wicket, stumps* կրիկետային լեզվամիավորները (Blake 1987): Խաղերը մասնավորապես կրիկետը, կարևոր դերակատարում են ունեցել (և ունենում են) վերնախավային

կոչվող դպրոցների աշակերտների մեջ ազգային պատկանելիության և ձանաչման զգացում պատվաստելու գործընթացում: Գեղագետները, նկատի ունենալով հատկապես այդ տիպի խաղերը, արվեստի և խաղերի միջև զուգահեռներ անցկացնելու համատեքստում՝ նշում են, որ խաղերը հաղորդակցության դպրոց են, ընդ որում՝ երեխաները, մեծանալով, խաղը փոխադրում են խաղային կանոնների, ապա և մարդկային գործունեության տարբեր ոլորտներ՝ սպորտ, արվեստ և այլն (Էշտետիկա. Ըլօվարք 1989:122): Այդպիսով, խաղը կամ տվյալ մարզաձևը դառնում է անհատական ու սոցիալ-քաղաքական ինքնության արտահայտիչ: Այդ ինքնության արտահայտիչն են դառնում նաև սպորտային (այդ թվում նաև կրիկետային) խաղեր մակածվող լեզվամտածողական տարրերը, որոնք դրսևորվում են լեզվաօճական և լեզվաարտահայտչական միջոցներով (խորհրդանշաններ, չափազանցություններ և նվազաբանություններ, ձարտասանական կամ հրետորական զանազան դարձույթներ և այլն): Կրիկետային խոսույթում խաղը գնահատվում է որպես ուղղամտության, ուժի և ազնվության, նաև անազնվության և քոլության արտահայտություն՝ կախված ինչպես խաղային կանոնների իմացությունից ու չիմացությունից, այնպես էլ խաղացողների բարոյական նկարագրից: *Play not cricket, but the foo* արտահայտությունն, օրինակ, ակնարկում է խաղի կանոնների չիմացություն և ոչ ազնիվ խաղ, իսկ *it is not cricket* արտահայտությամբ բնորոշվում է ամենայն անազնիվ իրողություն:

Բոլոր դեպքերում սպորտային խոսույթում, ինչպես նաև դրա գրական-գեղարվեստական արտացոլումներում (*Dickens Ch., Pickwick Papers*, 1837; *Blake W., Island in the Moon*, 1987 և այլն) դրսևորվում է որոշակի մշակութաբանական տեղեկատվություն, այն էլ՝ որոշակի մոտիվացիայով. մի տեղեկատվություն, որն, օժտված լինելով հոգեբանական ու իմաստաբանական որոշակի կենտրոնացումով, հանդիս է զալիս իբրև ինքնության ցուցիչ. քանի որ յուրաքանչյուր ինքնություն ինքն է ընտրում իրեն հարկավոր տեղեկատվությունը՝ համապատասխան մեկնաբանությամբ: Սա, վերջին հաշվով նշանակում է, որ լեզվաօճական ու լեզվաարտահայտչական միջոցների կիրառումը աշխարհայացքի, ներքին մոտիվացիայի խնդիր է, այլապես դրանք կդիտարկվեին իբրև ամեն ինչից անկախ գուտ լեզվական միջոցներ, որն, իհարկե, այդպես չէ, մանավանդ այսօր արդի ժամանակաշրջանում, եթե լեզվի մեջ ավելի ու ավելի է կարևորվում մարդաբանական գործոնը, նրա գործաբանական ու արտահայտչական կողմերի փախադարձ կապը: Ցույց է տրվում, որ լեզուն ու ոչը պատրաստի կամ ինքնակամ գործածվող միջոցներ չեն, որոնք կիրառում են գործը, հրապարակախոսը կամ հաղորդման հեղինակը, այլ պայմանավորված են որոշակի զաղակարագեղագիտական, բարոյաբանական և լայն առօմնով՝ ազգա-կրոնա-լեզվամշակութաբանական գործոնների անմիջական կամ միջնորդավորված ազդեցությամբ: Այսինքն՝ գոյություն ունեն մոտիվներ՝ մարդկային պահանջմունքներ, որոնք ներգործող ուժ են և դրդում են մարդուն խոսել ու գործել: Մյուս կողմից՝ դրանք ազդեցություն են գործում լսողի, ունկնդիրի, ընթերցողի վրա: *Մոտիվը* ըստ էլության հենց այն է, ինչը հոգելեզվաբանության մեջ անվանվում է գիտակցության մոտիվացիոն ոլորտ, բնորոշվում է որպես գործունեությանը, խոսքին ուղղվածություն հաղորդող ուժ, միտք, հոյս, նպատակ (Վիգոտսկий 1963:64):

Ինչու՞ են հրապարակախոսը, հոդվածագիրը, հաղորդավարը, հարցարույց վարողը, ակնարկագիրը իրենց խոսքում (մասնավորապես նկատի ունենք

սպորտային խոսույթի դրսևուրումները) կիրառում հենց այն լեզվաօճական հնարներն ու լեզվաարտահայտչական դարձույթները, որոնք կոչված են բնութագրելու տվյալ խաղը (Կրիկետ, ֆուտբոլ, բասկետբոլ, լող և այլն՝ այն դարձնելու առավել ներգործուն և դրանով իսկ ներգործելու մարդկանց վրա: Առաջին պատասխանն, իհարկե, այն է, որ այդ լեզվաօճական ու լեզվաարտահայտչական միջոցները բնորոշում են տվյալ խաղը, այդ խաղի ազգանշակութային, բարոյահոգեբանական, սոցիալ-քաղաքական նիստերը, տվյալ ժամանակաշրջանի, ինչպես նաև անձանք հրապարակախոսի, լրագրողի կամ հաղորդավարի գաղափարագեղագիտական ըմբռնումները: Սպորտային խոսույթում առաջնային են և հասարակական, և՝ անհատական պահանջնունքները, ինաստախոսքային մոտիվները, ձանաչողական և գեղագիտական մոտիվացիաները, ինքնաարտահայտման և ինքնապահպանման ազգային կամ սոցիալ-քաղաքական վարկանիշի բարձրացման խնդիրները (Կարասիկ 2002):

### **Եզրակացություն**

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ սպորտային խոսույթում օգտագործվող ամենաբազմազան լեզվաօճական ու լեզվաարտահայտչական միջոցների շարքում հատուկ տեղ են գրադեցնում կազմախոսական փոխաբերություններն ու դարձվածքները, որոնք կապ ունեն մարդու մարմնի տարբեր մասերի հետ (ոտք, գլուխ, ձեռք, բազուկ, որովայն, աչք, ականջ և այլն):

Սպորտային խոսույթում մոտիվացիոն առանձին դաշտ են կազմում ազգայի լեզվանշակութային և գաղափարագիտական թանձրացումներ պարունակող հասկացությունները, որոնք ինքնության և մշակույթի արտահայտություններ են, վերջին հաշվով՝ նպատակաուղղված որոշակի պատկերացում, գործունեություն և տրամադրվածություն հարուցելուն և ունեն համոզչական արժեք ու նշանակություն:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Арутюнов, С.А.; Рыжкова, С.И. (2009) *Культурная антропология*. М.: Весь Мир.
2. Виготский, Л.С. (1963) *Мышление и речь*. М.: Прогресс.
3. Винокуров, Е.А. (2012) О концепте *CR/СКЕТ* как социокультурном явлении в англоязычном сознании. // Филология и лингвистика в современном обществе: Материалы междунар. науч. конф., Москва, Май 2012. М.: Ваш полиграфический партнёр, сс. 56-61.
4. Садохин, А.П.; Грушевицкая, Т.Г. (2000) *Этнология*. М.: Академия.
5. Слышикин, Г.Г. (2004) *Лингвокультурные концепты и метаконцепты*. Автореф. д-ра фил. наук, Волгоград.
6. Карасик, В.И. (2002) *Язык социального статуса*. М.: Гнозис.
7. Леонтьев, А.А. (1997) *Основы психолингвистики*. М.: Смысл.
8. Маслова, В.А. (2001) *Лингвокультурология*. М.: Академия.

9. Тер-Минасова, С.Г. (2000) *Язык и межкультурная коммуникация*. М.: Слово.
10. Трушева, Г.С. (2011) *Проблема британской идентичности, в контексте интеграции Великобритании в Европейские Сообщества и ЕС*. Автореферат диссертации.
11. (1983) *Философский энциклопедический словарь*. М.: Советская энциклопедия.
12. Фрайденберг, О.М. (1978) *Миф и литература древности*. М.: Наука
13. (1989) *Эстетика*. Словарь, М.: Политиздат.
14. Benedict, R. (1983) *Patterns of Life*. Philadelphia: University of Pensilvania Press.
15. Blake, W. (1987) *Island in the Moon*. Cambridge: CUP.
16. Boas, F. (1982) *Language and Culture*. Chicago: University of Chicago Press.
17. Bourdieu, P. (1991) *Sport and Social Class*. // *Rethinking Popular Culture*. Berkley: University of California Press.
18. Brookes, Ch. (1978) *English Cricket: The Game and Its Players through the Ages*. London: Weidenfeld and Nicolson.
19. Dickens, Ch. (1837) *Pickwick Papers*. London: Chapman and Hall.
20. Flavell, L. and R. (1999) *The Chronology of Words and Phrases*. London: OUP.
21. Mead, M. (1961) *Coming of Age in Samoa*. New York: Morrow Quill.
22. Smith, A. (1999) *Etnosymbolism and Nationalism. A Cultural Approach*. New York: Routledge.

### **The Linguistic Expression of Identity in English Discourse on Sports**

The article aims at presenting the concepts, linguistic devices and expressive means typical of sports discourse as an expression of national and social-psychological identity. Though numerous researches have been dedicated to cultural anthropology, national mentality and the problems of linguo-cultural identity, the link between sports discourse and the mentioned problems have not yet been clarified adequately. A comprehensive investigation should be conducted to elucidate the terms, typical concepts of the domain, phraseological expressions, epithets and especially expressive means (rhetorical questions, exclamations or address) derived from various games of sport. The article focuses on the bilateral link between the sport games and types and their linguistic and linguo-stylistic manifestations which not only reflect the game itself but also have an impact on the psychological and ideological characterization of the game.

### **Языковое выражение идентичности в английском спортивном дискурсе**

Цель статьи – презентация характерных для спортивного дискурса понятий, лингвостилистических и выразительных средств языка в свете

современных подходов, рассматривая их как способы выражения национальной и лингвокультурной идентичности, а также социально-психологической и общественной потребности. Несмотря на то, что проблемам культурной антропологии, национального менталитета и историко-лингвокультурологической идентичности посвящено немало научных работ, разъяснение связи между спортивным дискурсом и вышеуказанными проблемами до сих пор остается актуальным. В частности, необходимо комплексное изучение терминов, понятий, заимствованных из разных спортивных игр и видов спорта, фразеологизмов, эпитетов, метафорических сочетаний, особенно оборотов речи (риторический вопрос, риторическое восклицание или обращение), и т.д. В статье особое внимание уделяется двусторонней связи между спортивными играми и видами спорта и их языковым и лингвостилистическим выражением.